ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆԻ Պ. ՂԵՎՈՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գ. Պռոշյան, Խանջյան 2, Հեռ. (+374 224) 6 42 70, էլ. փոստ proshyan@schools.am

№401 01.12.2023թ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանգիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Հայկազունք» ՍՊԸ -ի

Տնօրեն Կ.Մացակյանին

Հարգելի՝ պարոն Մացակյան

«Պռոշյանի Պ.Ղևոնդյանի անվ. միջն.դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հայկազունք» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Մատակարար) 21.08.2023թ.-ին կնքվել է թիվ ՀՀԿՈՏ-ՊՌՈՇՅԱՆ-ՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02-3 պայմանագիրը, որի համաձայն մատակարարը պետք է ապրանք մատակարարեր մինչև 25.12.2023թ:

Սույն թվականի նոյեմբերի 24-ին ձեզ ուղարկել ենք պատվերի ցուցակ, նոյեմբերի 27-ին՝ հարցում պատվերի առաքման մասին: Սակայն առ 01.12.2023 թ. ոչ մի պատասխան չենք ստացել:

Հիմք ընդունելով, որ Մատակարարը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի հավելված 1-ի 33-րդ մասի 4-րդ և 17-րդ կետերի դրույթներով՝ «Պռոշյանի Պ.Ղևոնդյանի անվ. միջն.դպրոց» ՊՈԱԿ -ը միակողմանի լուծում է «Հայկազունք» ՍՊԸ -ի հետ 2023 թ.-ի օգոստոսի 21-ին կնքված թիվ ՀՀԿՈՏ-ՊՌՈՇՅԱՆ-ՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02-3 պայմանագիրը:

Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը խախտելու համար Մատակարարի տրվում է 10 աշխատանքային օր որակավորման և պայմանագրի ապահովումները համապատասխանաբար 4662 (չորս հազար վեց հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամի և 3108(երեք

հազար հարյուր ութ) ՀՀ դրամի չափով վճարում կատարելու համար: Փոխանցումը պետք է կատարել Գնորդի բանկային հաշվին /ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն 900118000208/:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Հայկազունք» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ Կոտայքի մարզի «Պռոշյանի Պ.Ղևոնդյանի անվ. միջն.դպրոց» ՊՈԱԿ-ի

տնօրեն՝ Մ.Ավետիսյան